



## ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ.

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԷԸՄԱՆՍՈՐԱՆՆԵՐ.

Իւրոպայում և հիւսիսային Ամերիկայում ժողովրդեան սկզբնական կրթութեան գործն հաստատուն արմատ բռնելուց յետոյ կարիք զգացուեցաւ բարձրագոյն գիտութիւնը տարածելու: Գիտութիւնների ճիւղաւորումն և հսկայական զարգացումն օր է ցօր անհնարին կոցուցին դրանց ծաւալումն ժողովրդի ամենայն խաւերի մէջ, այսպիսով գիտութիւնն և նրա ամէն մի ճիւղն սեպհականութիւն զարձաւ միայն որոշ անհատների և կազմուեցաւ գիտնականների դասակարգը, սակայն ճշմարիտ քաղաքակրթութեան նպատակն է ամենքին հաղորդ անել գիտութիւնների զարգացման: Այս նպատակն աչքի առաջ ունենալով՝ վաղուց արդէն ջանքեր են եղել գիտութիւնները ժողովրդականացնելու, այսօր եւրոպական բոլոր լեզուներով ևս կայ բոլոր գիտութիւնների ժողովրդականացրած դրականութիւն: Գիտութիւնը ժողովրդականացնել կը նշանակէ գիտութիւնը մատչելի կացուցանել ժողովրդին, այս արուեստի մէջ անգլիացիք առաջին տեղն են բռնում և ոչ մի եւրոպական ժողովրդի մէջ այն աստիճանի տարածուած չեն գիտութիւնների սկզբունքներն, որքան անգլոսաքսոնական ազգերի մէջ: Բայց սոսաւորուս էլ չբաւականացան նրանք, անգլիացիքն էին առաջին ազգն, որ հիմնեցին ժողովրդական համալսարաններն (University extension), այսօր նրանց օրինակին հետեւելով՝ հիմնել են ազատ համալսարաններ Դանիայում, Շվեդիայում, Ֆինլանդիայում և Բելգիայում, փորձեր են լինում և Գերմանիայում, ուր սակայն հին համալսարաններն միշտ այդ ձրգ-

տումն ունեցել են և ունին, այնտեղ իւրաքանչիւր համալսարանում կան ամէն մի կիսամեակին մի քանի ուսուցչապետներ, որ հանրամատչելի դասեր են խօսում որոնց բացի ուսանողներից իրաւունք ունեն և ուրիշները մասնակցելու:

Անգլիական «տարածուած համալսարանների» (University extension) երկու տիպ կայ, առաջինը ձգտում է նմանել բոլորովին հին համալսարանների ընթացքին, որով և մեծ պատրաստութիւն է պահանջում ուսանողներից իսկ երկրորդը՝ իջնում է մինչև ուկնդիրների պատրաստութեան աստիճանը և աշխատում է նրանց մատչելի կացուցանել զիւթեան վերջին խօսքը: Առաջին տեսակին աշխատում է նմանել Կէմբրիջի ժողովրդական համալսարանն, իսկ երկրորդին՝ Օքսֆորդին:

Կէմբրիջի ուսուցչապետները դասընթացներ են կազմում (իւրաքանչիւր գիտութեան համար 12 դասախօսութիւններ) մեծամեծ կենդրոններում իսկ Օքսֆորդին փոքր աւաններում և գիւղերում: Այս ձեռնարկութիւնն արագ յառաջադիմում է, 1872 թ. Կէմբրիջը կազմել էր 33 դասընթաց, մինչ այժմ տարեկան 136 դասընթացներ են կարգացուել:

Ամերիկայում դասախօսութիւնների փոխանակ տեղի են ունենում ժողովներ, որոնց մէջ դործնական առաջնորդութիւն են անում ուսուցչապետներն, այս ժողովների կենդրոն կարելի է համարել Շոտոկվա քաղաքը:

Դանիայում աւելի ընդարձակ ծրագիր ունին ժողովրդական համալսարանները, մինչ անգլիականներն առաւելապէս բնագիտական դասընթացներով են զբաղուում: Դանիայում կան դասընթացքներ և իրաւագիտութեան, պատմութեան, դրականութեան, աստուածաբանութեան և ընդ այսպէս Ռէտկիլում գիւղացին կարող է լսել ընկերավարական գիտութիւններ, Խերլունդում աստուածաբանական:

Գերմանիայում այդ նպատակի համար կազմուած է մի ընկերութիւն, որ կոչուում է «ժողովրդական դասախօսութիւնների ընկե-



բութիւնս: Այս բնկերութիւնը հրաւիրում է հեղինակաւոր անձանց դասեր կարգալու իրենց գիտութիւններից գանազան քաղաքներում: Այս գասախօսութիւններն այնքան սիրելի են, որ երբեմն մինչև 7000 անձինք են ժողովում որ և է գիտնականի լսելու համար:

\*\*\*



### ՄԱՄԻՍ ԲԻՏԱՆԱԼԸ:

(Պատկերներ Երևանի գիղական կեանքից):

Թէ ինչ վաղժ, ինչ աստղի տակ ու ինչ տեղ եմ մօրէս աշխարհ էկէ՝ էդ չիտեմ, հմա էսքանն է միտս որ, հլա նոր մէքիչմ խելքս կտրմ էր, նոր աջ ձեռն ձախէս ջկմ էի, որ մեր տնեցիք ընծի խարստմ էին ու վրէս ծիծաղմ: Մէկն ըսմ էր թէ՝ Գաղային դոմշի թրքի միջէն ենք գտէ, մէկէլը թէ՝ պատի ծակէն ենք հանէ, էն մէկէլը թէ—չէ՝ Գաղային մէ բօշի ձեռնէ ենք առէ, երոր բօշէն խուրջինի մէջը քցած, իշու վրէն դրած ման էր ածմ տները: Հըմի թէ ըզոնցէն վէրն է զօրդ թող իրանք գան ջուղար տան, մէնակ բանն էս է որ, էն վաղժը էդ խօսքերուն հաւատմ էի ու ես ընծի ընծի լայմ, ծեծկուում ու ըսմ, չհմ, ընչի են ընծի դոմշի թրքի միջէն գտէ, ես պատի ծակէն հանէ, ես թէ չէ բօշէցէն առէ, որ հմի ըսմ ու վրէս ծրծաղմ են: Շատ որ լալմ ու ծեծկուում էի, նոր մամս սկսմ էր դուրգուրել ու ըսել. քա դուրբանդ էդնիմ, Գաղօ ջան, ըզոնք քուլլի սուտ խօրաթայ են, խասիդ են ըսմ, որ դու լաս, իրանք վրէդ ծրծաղին, Խօ դու խելառ չես, որ ըզման բաներու հաւատմ ես: Սաքօն է պատի ծակէն ելած, խօ դու չես, դու մեր տղէն ես: Չէնդ կտրէ, քեզի փօփօլ պրտի առնիմ, խէտ դուլրայ պրտի գործեմ: չանթայ պրտի կարեմ ու ես ինչ գիտեմ էս տեսակ հաղար ու մէ բանով խաբխրում, ձէնս կտրում էր, հմա ոնչ փօփօլ կար, ոնչ դուլրայ, ոնչ էլ չանթայ:

Բաղի բաղի միթիթարում էի էն մտքով, որ էդ խօսքերը Սաքային էլ էին ըսմ, հմա շատ էլ որ լայմ էի, արդդ ահ էին տալմ: Մէկն ըսմ էր. «Սուս, թէ չէ բօբօլը դռան յետեն է, կուգայ, կուտէ քեզի», մէկէլը թէ՝ «տօ, մարդագէշն էկել է երթիկը, լալիան տղայ է ման գալմ, որ տանի ուտէ, էն մէկէլը թէ՝ «բու, առնդ շինուի, մարդագէշը որն է, ձիթհանքը էման մէ օխտը գլխանի դեմ է էկել որ, առնն մէ գլխու վրայ յիթէք չօրս

բերան կայ, Անկանջը դրել է ձիթհանքի խօշտի վրայ ու գետնէն ձէն է քաշմ: իմ անէն որ մատը ղըշի լացի ձէն է գալմ, էրթմ, առնմ ուտմ է լալիան տղին», Ըզօնց ահուն էլ չէի կնմ, բանծր լալ, ձէնս փորս էի քցմ ու հեկեկմ հեկեկմ մը: Նոււմ, Չէնս կտրելուն պէս մամս ջուխտ ձեռով ծափ էր դարկմ, երթիկն աշմ ու հետն ըսմ. «Չհա, ալէշ, անտէր իծանք երթիկն էին էկել, ընդուր էր տղէս լալմ, թէ չէ Գաղօս լալող տղայ է, փախան, գնացին իծանք», Հմա որ թարգրմ էի լացս, ըսմ էր. «Ա՛յ, անտէր իծան, էլի էկան երթիկը»:

Հլա զօրուայ բանը էրթայ ու գայ. գոռ ու ջանլամ, ինչ էդնմ, էդնմ էր, ինչ ըսմ, ըսմ էին, անցնում էրթում էր. հմա գիշերները ընծի հըմար անտանելի էր, Այայ թէ ծրագը վառէր, թաթը դրուէր, էլ ոնչ տնէն ոգայ ու ոնչ էլ ողեցէն տուն կրնայի երթայ առանց մարդու փէշ բռնելու ես գիրկ ելնելու: Եանի կէնէի թէ ողեցէն մէնակ տուն գամ, հմա սագրէն կիջնէի, դառարի քովը կուգայի, որ աշքս չէր ընկի մութ տեղը, ես կիմանայի թէ էս է՝ բօբօլն ու մարդագէշը ըզեղ են: ընծի պրտի բռնեն, էն սհաթը թողնէի ու ձիծփալով յետ փախնէի կը, Թէ որ ողէն էլ մարդ չէր էդնի, ես պտի էնքան ձիծփայի, լայի, որ ձէնս իմանային, տնէն գային տանէին, ես թէ չէ մէ չուլմ պրտի քաշէի վրէս, գլուխս ծածկէի, սոլուղ մոլուղս ընծի քաշէի, քրտնքի մէջ էնքան դողայի որ, ինչարի մէկը գար ողէն, հետը երթայի տուն, Տունն էլ որ, թէ մէ քիչմ շէլլիկը քիշընար, ձէն ու ձուկը կտրէր կը, էման կը վախեանայի, անկջներս կը խփխփային, աշքերս ալլաղ մալլաղ կէնէի ու գիտէի թէ էս է՝ պատերու ծրկէն, քեռէքէն դեւեր ու սատանէք դուս պրտի թափին, ընծի բռնեն, Գիշերները ճրագնէն որ կանցնէին, պարկէին կը քնելու, էլ իմ քուսն չէր տանի: Մութ տեղը աշքիս կէրեային տեսակ տեսակ օձեր, բերանները բացած, լեզուները դուս քցած, փոջլիկ, կոտոշով ու պոշով սատանէք, ընտից եանի կուգար օխտը գլխանի դեւ բերանը բացած, լեզուն դուս քցած ու կը մօտենար ընծի, որ ուտէ, արդդ կը բօբօլայի, ձիծփայի ու տեղիս մէջը քացի քացի էնէի կը, Չէնիս տնեցիք պարթնէին, ճրագ կէնէին որ՝ ոնչ օձ, ոնչ սատանայ, ոնչ դե, ես ընծի ընծի ձիծփում ու տեղիս մէջը եօրղընիս քացոտմ եմ: Արդդ լայի ու ծեծկուէի կը էնքան որ, ինչարի պապս ու մամս առնէին ծոցերը, դուր գուրէին, ձէնս կտրէին:

Երբ էս տեսակ մէ քանի իրկուն թարգրեցի ձիծփալս ու լացս, նոր մամս գլխու ընկաւ:

«Ահ, հոյը գլխուս, տղէս վախեցել է, վեր-